ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/2025

«Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 28-ին հրավիրված արտահերթ նիստի /նիստի ընթացքը ձայնագրվել է/:

Հանձնաժողովի նիստի վայրը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք.Երևան, Վ.Սարգսյան 3

Հանձնաժողովի նիստի սկիզբը՝ 2025 թվականի փետրվարի 28, ժամը 11:00

1. Արաքսիա Սվաջյան — ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/

2. Թամարա Սարգսյան — Նախարարության հանրակրթության վարչության պետ /հանձնաժողովի անդամ, գնահատող/

3. Ստալ Սարդարյան — Նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, բացող/

4. Մերի Ղոնյան — Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության կրթական ծրագրերի ֆինանսավորման բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի անդամ, բացող/

5.Կարինե Բաբայան — Նախարարության հանրակրթության վարչության փորձագետ /հանձնաժողովի անդամ, գնահատող/

6. Մերի Մուրադյան — Նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ/ /հանձնաժողովի քարտուղար/

Հանձնաժողովի նիստին բացակայում էր Ստալ Սարդարյանը:

Հանձնաժողովի նիստի օրակարգի հարցեր.

Հարց 1. «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների «Ֆրանսերեն 9», «Հայաստանի պատմություն 10», «Ռուսաց լեզու 10», «Հայաստանի պատմություն 11», «Ֆրանսերեն 11», «Քիմիա 11», «Ռուսաց լեզու 11», «Հայաստանի պատմություն 12», «Ռուսաց լեզու 12», «Ֆրանսերեն 12», «Քիմիա 12», «Կենսաբանություն 12» առարկաների դասագրքերի ստեղծման նպատակով դրամաշնորհային մրցույթներ հայտարարելու մասին:

Հարց 2. 9-րդ դասարանի՝/ծածկագիր՝ «ՀՀԿԳՄՍՆԴՄ-1146/25-9»/, «Ֆրանսերեն», **10-րդ դասարանի՝**/ծածկագիր՝ «ՀՀԿԳՄՍՆԴՄ-1146/25-10/1»/, «Ռուսաց լեզու», «Հայաստանի պատմություն», **11-րդ դասարանի՝** /ծածկագիր՝ «ՀՀԿԳՄՍՆԴՄ-1146/25-11»/, «Ֆրանսերեն», «Քիմիա», «Ռուսաց լեզու», «Հայաստանի պատմություն», **12-րդ դասարանի՝** «ՀՀԿԳՄՍՆԴՄ-1146/25-12»/ «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Հայաստանի պատմություն» առարկաների դասագրքերի ստեղծման հայտահրավերների տեքստերի քննարկում, հաստատում, armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով տեքստերի հրապարակում:

Հարց 3. Սահմանել դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի հաջորդ նիստի ժամանակացույցը:

Զեկուցող՝ 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի քարտուղար Մ.Մուրադյան:

Օրակարգի 1-ին հարց.

Մ.Մուրադյանը հայտնեց, որ «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված փետրվարի 5-ին և փետրվարի 13-ին տեղի ունեցավ 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների հանրակրթական առարկաների նոր դասագրքերի ստեղծման նպատակով Նախարարության կողմից հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԴՄ-1146/00025», «ՀՀԿԳՄՍՆԴՄ-1146/25-10», «ՀՀԿԳՄՍՆԴՄ-1146/000025» և «ՀՀԿԳՄՍՆԴՄ-1146/0000025» ծածկագրերով դրամաշնորհային մրցույթների մասնակիցների կողմից armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգում մուտքագրված հայտերի բացում: Մրցութային հանձնաժողովի կողմից կատարվեց ներկայացված փաթեթների ուսումնասիրություն: Արդյունքում պարզ դարձավ, որ **9-րդ դասարանի՝** «Ֆրանսերեն», «Նախնական զինվորական պատրաստություն», **10-րդ դասարանի՝** «Ռուսաց լեզու», «Հայոց պատմություն», **11-րդ դասարանի՝** «Ֆրանսերեն», «Քիմիա», «Ռուսաց լեզու», «Հայոց պատմություն», «Նախնական զինվորական պատրաստություն», **12-րդ դասարանի՝** «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաների դասագրքերի ստեղծման հայտեր չեն ներկայացվել: Նախարարությունում խնդիրը քննարկվեց:

2025-2026 ուստարում սովորողներին ուսպլանով նախատեսված բոլոր դասագրքերով ապահովելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով հարցի կարևորությունը՝
Հանձնաժողովը 4 կողմ 0 դեմ հարաբերակցությամբ որոշեց՝

Օրակարգի 1-ին հարց.

1. 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների առարկաների դասագրքերի ստեղծման նպատակով հայտարարել նոր դրամաշնորհային մրցույթներ:

2. Օրակարգի 2-րդ հարց.

1.Ներկայացվեց և մրցութային հանձնաժողովի կողմից քննարկվեց 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների առարկաների դասագրքերի ստեղծման հայտահրավերների տեքստերը, որոնք հավանության արժանացան:

3.Օրակարգի 3-րդ հարց.

1. Մրցութային հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության:

Հանձնաժողովը 4 կողմ 0 դեմ հարաբերակցությամբ որոշեց՝

1. Հաստատել 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցույթների մասին հայտահրավերների տեքստերը և երեք աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրել armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգ:
2. Իրազեկել հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ դրամաշնորհի հատկացման մրցույթի հայտահրավերը տեղադրել Նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Մրցութային հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության:

Հանձնաժողովի նախագահ — Արաքսիա Սվաջյան

Հանձնաժողովի անդամներ՝ — Թամարա Սարգսյան

Ստալ Սարդարյան

Մերի Ղոնյան

Կարինե Բաբայան

Հանձնաժողովի քարտուղար՝ — Մերի Մուրադյան